# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.02.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/09**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.05665)

Քննելով «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-Ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 17.01.2020թ. ներկայացված և 17.01.2020թ. վարույթ ընդունված բողոքը և նշված բողոքի շրջանակներում «Սապսան գրուպ» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ. ներկայացված և 24.01.2020թ. վարույթ ընդունված համանման բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/09 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

### 1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 17.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) բժշկական

պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման մասին (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ, որի հրավերի թվով 7 չափաբաժիններից «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկում է 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինները:

Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական Բնութագիր - Գնման Ժամանակացույց» Հավելված թիվ 1-ի «անվանումը» սյունակներում 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար գրված է միևնույն՝ «Դիալիզատոր» անվանումը, իսկ «տեխնիկական բնութագիրը» սյունակներում ներառված պահանջներում՝ այդ 2 ապրանքների համար, առկա է միևնույն՝ «…. մանրազերծման մեթոդը ….. գամմա ճառագայթմամբ ….» պահանջը:

Նշված մանրէազերծման մեթոդը հանդիսանում է միանվագ օգտագործման բուժպարագաների մանրէազերծման համար կիրառվող ռադիացիոն մանրէազերծում մեթոդի մի տարատեսակը:

Համաձայն ՀՀ-ի կողմից վավերացրած Միջպետական Ստանդարտ «ГОСТ ISO 8.651-2016»-ի «Ներածություն» բաժնի երկրորդ պարբերության «…. Ռադիացիոն մանրէազերծումը դա ֆիզիկական պրոցես է, որը կապված է իոնիզացնող ճառագայթմամբ բժշկական պարագաների ճառագայթման հետ: Պարագաները ենթարկվում են ճառագայթման մասնագիտացված ռադիացիոն-տեխնոլոգիական կայանքներում՝ օգտագործելով 60Co կամ 137Cs ռադիոնուկլիդների գամմա ճառագայթման աղբյուրներ կամ էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են (գեներացնում են) էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր: Ռադիացիոն մանրէազերծումը ճիշտ կատարելու դեպքում այն հանդիսանում է անվտանգ և հուսալի արդյունաբերական պրոցես: …. Ռադիացիոն մանրէազերծման գործընթացը հանդիսանում է մեկանգամվա օգտագործման բժշկական նշանակության ապրանքների արտադրության եզրափակիչ փուլը:» սահմանումների՝ բժշկական պարագաների ռադիացիոն մանրէազերծումն իրականացվում է իոնիզացնող ճառագայթներով բժշկական պարագաներին 2 մեթոդներով ճառագայթելով՝ օգտագործելով՝ 1. գամմա ճառագայթման աղբյուրներ, և 2. էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր:

Ընկերությունը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, նույն հոդվածի 3-րդ մասը:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով նշված են տեխնիկական բնութագրի սյունակներում հնարավորինս չափով ներառված չեն գնման առարկաների ամբողջական և համարժեք նկարագրությունները, որոնք առկա են ՀՀ –ի կողմից վավերացված «ГОСТ ISO 8.651-2016» ստանդարտում, համաձայն որի բժշկական պարագաների ռադիացիոն մանրազերծումն իոնիզացնող ճառագայթներով իրականացվում է 2 մեթոդով, որոնցից միայն մեկի ներառումը հրավերի տեխնիկական բնութագիրը սյունակներում ամբողջական չէ, և համարժեք չէ այն նկարագրությանը, որն առկա է ՀՀ-ում գործող ստանդարտում:

ՀՀ-ում գործող ստանդարտում առկա՝ ձեռքբերվող ապրանքի ստանդարտին վերաբերող պայմանների հստակ նկարագրության ոչ ամբողջական ներառումը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 3-րդ մասով սահմանված պահանջներին և արգելք է հանդիսանում բուժպարագաների ռադիացիոն մանրէազերծումն իոնիզացնող ճառագայթներով իրականացվող երկրորդ մեթոդով ռադիացիոն մանրէազերծման ենթարկված «Դիալիզատոր» և «Արյունատար գիծ» անվանումով ապրանքներն առաջարկող հնարավոր մասնակիցների՝ այդ թվում նաև «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը Ընթացակարգի հրավերի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

«Խաչպար» ՍՊԸ-ն, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. հունվարի 13-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ բուժպարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրել է, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունել որոշում, որը կպարտավորեցնի «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում նշված ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգում փոփոխություն կատարելու համար՝ հրավերի 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը ի լրումն գրությամբ հայտնել է հետևյալը.

Ի պատասխան «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքի 22.01.2020թ. Պատվիրատուն Ձեզ է ներկայացրել թիվ 122 գրությունը, որտեղ իր դիրքորոշումները հիմնավորելու համար ներկայացրել է ՀՀ ԱՆ գլխավոր քարտուղարի գրությունները և դրանց կից ՀՀ ԱՆ մասնագետների կողմից մշակված դիալիզի պարագաների ունիվերսալ բնութագրերը, որոնք Պատվիրատուի կողմից կիրառվել են «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգը կազմակերպելիս:

Պատվիրատուի գրությանը կից ներկայացված՝ ՀՀ ԱՆ մասնագետների կողմից մշակված դիալիզի պարագաների ունիվերսալ բնութագրերի տվյալները պարունակող, աղյուսակում «Դիալիզատոր» միևնույն անվանումը ունեցող թիվ 1, 2 և 3-րդ ապրանքների համար առաջարկված են միևնույն՝ «… մանրէազերծման մեթոդը շոգով կամ ռադիացիոն մեթոդով…» մանրէազերծման մեթոդները, որոնք ընդհանրական են և մրցակցային, քանի որ չեն պարունակում սահմանափակումներ և արգելք չեն հանդիսանում հնարավոր բոլոր մեթոդներով մանրէազերծված «Դիալիզատոր»-ներ առաջարկող հնարավոր բոլոր մասնակիցների համար:

Պատվիրատուի «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով պահանջվող՝ «Դիալիզատոր» միևնույն անվանումը ունեցող, ապրանքների համար առկա է միևնույն՝ «… մանրազերծման մեթոդը …. գամմա ճառագայթման մեթոդով ….» պահանջը, ինչը հակասում է Պատվիրատուի գրությանը կից ներկայացված՝ ՀՀ ԱՆ մասնագետների կողմից մշակված դիալիզի պարագաների ունիվերսալ բնութագրերին, պարունակում է սահմանափակումներ, որոնց պատճառով էլ «Խաչպար» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել հրավերի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով:

Լրացուցիչ տեղեկացնում եմ, որ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով մրցույթով պահանջվող թվով 7 ապրանքների հայտերի էլեկտրոնային բացումը կայացել է 2020թ. հունվարի 24-ին, հայտեր են ներկայացրել թվով 3 մասնակիցներ, որոնցից հրավերի թիվ 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասերով գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.01.2020թ. ժամը 10:40-ին և 30.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

**2. «Սապսան գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Սապսան գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Կազմակերպություն) 24.01.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 06.01.2020թ. հրապարակել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Հրավերի թիվ 1 չափաբաժնում՝ «Արյունատար գիծ» անվանումով պատվիրատուն կազմել է այնպիսի բնութագիր, որը խտրական է և սահմանափակում է մրցակցությունը, մասնավորապես տեխնիկական բնութագրում չեն տրվել շեղման միջակայքեր:

Ստորև ներկայացված է թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը:

«Արյունատար մագիստրալներ (զարկերակ-անոթ լրակազմ): Պոմպային հատվածի ներքին տրամագիծը 8մմ, երակային օդածուղակի տրամագիծ 22մմ, լցման ծավալը 161մլ +-20%, մանրէազերծման մեթոդը՝ ճառագայթմամբ մանրէազերծում, պետք է չպարունակի լատեքս: Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է»:

Բացի այդ, մանրէազերծման մեթոդը նշված է ճառագայթմամբ, սակայն միջազգային պրակտիկայում, գործող նորմատիվ ակտերով թույլատրված է նաև էթիլեն օքսիդով մանրէազերծումը, որն իրենից ներկայացնում է մանրէազերծման ավելի մատչելի մեթոդ, հետևաբար այդ եղանակով մանրէազերծված արյունատար գծերի ինքնարժեքն ավելի ցածր է:

Այսինքն՝ առանց որակի կորստի, հնարավոր է խնայել պետական միջոցները՝ ներառելով տեխնիկական բնութագրում նաև էթիլեն օքսիդով մանրէազերծումը: Հակառակ դեպքում բոլոր այն հնարավոր մասնակիցները, որոնք վաճառում են էթիլեն օքսիդով մանրէազերծված արյունատար գծեր, չեն կարողանալու մասնակցել նշված ընթացակարգին:

«Սապսան գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոքի փաստացի և իրավական հետևյալ հիմքերը.

1. պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար,
2. չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Տվյալ դեպքում մրցակցության հավասար պայմաններ չի ապահովվում էթիլեն օքսիդով մանրէազերծված արյունատար գծեր առաջարկող ընկերությունների համար:

«Սապսան գրուպ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ընդունել որոշում «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի հրապարկած հրավերի թիվ 1 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը փոփոխելու վերաբերյալ:

Կազմակերպությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.01.2020թ. ժամը 10:40-ին և 30.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ն 30.01.2020թ. ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը դիրքորոշումը.

22.10.2020թ. ՀՀ առողջապահության նախարարության մասնագետների կողմից մշակվել են դիալիզի պարագաների ունիվերսալ տեխնիկական բնութագրերը, որով պետք է առաջնորդվեն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունները:

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգը կազմակերպելիս բոլոր չափաբաժինների մասով, այդ թվում՝ 1-ին չափաբաժնի մասով, կիրառվել են վերը նշված ունիվերսալ տեխնիկական բնութագրերը՝ ավելացնելով մեր կենտրոնում գործող սարքի անվանումը, որոնք համապատասխանում են կազմակերպության կարիքներին:

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքներից ելնելով, մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրեր սահմանելը, դա Պատվիրատուի օրենքով ամրագրված

իրավունքն է՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն:

«Գյումրու ԲԿ» ՓԲ ընկերությունը միաժամանակ հայտնել է, որ 2019 թվականին նույն չափաբաժնի տեխնիկական բնութագրի մասով «Խաչպար» ՍՊ ընկերությունը բողոք է ներկայացրել, որը չի բավարարվել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից: Այդ իսկ պատճառով 2020 թվականին առաջնորդվել է նույն տեխնիկական բնութագրով:

«Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.01.2020թ. ժամը 10:40-ին և 30.01.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ՆԳ-2020/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի հավելված 1-ի թիվ 1-4-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

| **չ/հ** | **անվանումը** | **տեխնիկական բնութագիրը** |
|---|---|---|
| **1** | Արյունատար գիծ | Արյունատար մագիստրալներ (զարկերակ-անոթ լրակազմ): Պոմպային հատվածի ներքին տրամագիծը 8մմ, երակային օդածուղակի տրամագիծ 22մմ, լցման ծավալը 161մլ +-20%, մանրէազերծման մեթոդը՝ ճառագայթմամբ մանրէազերծում, պետք է չպարունակի լատեքս: Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է: |
| **2** | Դիալիզատոր | Գերզտման գործակիցը 88 (±20%) մլ/ժամ/մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 2.1 (+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, ***մանրազերծման մեթոդը շոգով կամ գամմա*** |

| | | |
|---|---|---|
| | | ***ճառագայթման մեթոդով*** (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է: |
| **3** | Դիալիզատոր | Գերզտման գործակիցը 76 (±20%)մլ/ժամ/մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.8(+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, ***մանրազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով*** (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է: |
| **4** | Դիալիզատոր | Գերզտման գործակիցը 68 (±20%)մլ/ժամ/մմ Hg, թաղանթի նյութը՝ սինթետիկ, արդյունավետ մակերեսը 1.6(+-0.1)մ2, թաղանթի հաստությունը 30-40մկմ, ներքին տրամաչափը 200մկմ+-10%, լցման ծավալը մինչև 120մլ, ***մանրազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթման մեթոդով*** (համաձայն հեմոդիալիզի սարքավորումների տեխնիկական անձնագրի պահանջների): Գործող Dialog + սարքի հետ համատեղելի: ISO 13485 և CE կամ համարժեք սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է: |

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և նշված բողոքի շրջանակներում «Սապսան գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը, «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

***5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով՝ «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ՝ հրավերի հավելված թիվ 1-4-րդ չափաբաժինների մասով նախատեսելով վերոնշված տեխնիկական բնութագրերը:

Բողոքով «Խաչպար» ՍՊԸ-ն պնդել է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրն ամբողջությամբ չի նկարագրում ձեռքբերվող ապրանքը և այն հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին, քանի որ նշվել է մանրէզերծման ռադիացիոն մեթոդի միայն մեկ տեսակը՝ գամմա ճառագայթմամբ, սակայն չի նշվել երկրորդ մեթոդը՝ էլեկտրոնների արագացուցիչներ, որոնք ստեղծում են էլեկտրոնային կամ արգելակման ճառագայթման փնջեր:

Միաժամանակ «Սապսան» ՍՊԸ-ն ներկայացված համանման բողոքով հայտնել է, որ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը մրցակցության հավասար պայմաններ չի ապահովվում էթիլեն օքսիդով մանրէազերծված արյունատար գծեր առաջարկող ընկերությունների համար:

Այս տեսանկյունից արձանագրում եմ հետևյալը. Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով 2-4-րդ չափաբաժինների համար նախատեսվել է

մանրէազերծման մեթոդի երկու տեսակ՝ **մանրէազերծման մեթոդը շոգով կամ գամմա ճառագայթմամբ՝ հնարավորություն ընձեռնելով մասնակցին առաջարկել նշված երկու մեթոդներից որևէ մեկը:**

Իր հերթին գամմա ճառագայթմամբ մանրէազերծումը հանդիսանում է մանրէազերծման ռադիացիոն մեթոդի տարատեսակ: Ընկերությունը պնդում է, որ ռադիացիոն մանրէազերծման մյուս մեթոդը չմատնանշելը հանգեցնում է գնման առարկայի ամբողջական նկարագրված լինելու պահանջի խախտման: Այս տեսանկյունից, ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված փաստարկները, գտնում եմ, որ դրանք անհիմն են, քանի որ նախ՝ հրավերով սահմանվել է մանրէազերծման երկու կամընտրային մեթոդ, որն ընդլայնում է առաջարկվող ապրանքների շրջանակը, մյուս կողմից ռադիացիոն մեթոդներից որևէ մեկը մատնանշելը չի կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ նշված երկու մեթոդների միաժամանակյա առկայությունը պարտադիր պահանջ չէ: Տեխնիկական բնութագրում մանրէազերծման մեթոդը նշելը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ գնման առարկայի հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը, որը բխում է պատվիրատուի գնման պահանջից: Նշված պահանջի սահմանումը չի խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, հատկապես 5-րդ մասի պահանջները:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Հետևաբար արձանագրում եմ, որ տվյալ դեպքում գնման առարկայի մանրէազերծման մեթոդի մատնանշումը չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով նախատեսվել է մանրէազերծման մեթոդը՝ ճառագայթմամբ:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ գնման առարկայի մանրէազերծման ճառագայթմամբ մեթոդի մատնանշումը և էթիլեն օքսիդով մանրէազերծման չնշումը չի

կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ նշված երկու մեթոդների միաժամանակյա առկայությունը պարտադիր պահանջ չէ:

Միաժամանակ ինչ վերաբերվում է «Սապսան» ՍՊԸ-ի կողմից համանման բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով՝ «Արյունատար գիծ» անվանումով, Պատվիրատուն կազմել է այնպիսի բնութագիր, որը խտրական է և սահմանափակում է մրցակցությունը, մասնավորապես տեխնիկական բնութագրում չեն տրվել շեղման միջակայքեր, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Պատվիրատուն նպատակ է ունեցել իրեն վերապահված լիազորությունների կատարման շրջանակներում ձեռքբերել կարիքին համապատասխան ապրանքներ՝ համարժեք հատուցմամբ, գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման եղանակով: Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով շեղման միջակայքեր տվյալ դեպքում չնշելը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն և «Սապսան գրուպ» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ. ներկայացված համանման բողոքն անհիմն են և ենթակա են մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 17.01.2020թ. ներկայացված բողոքը և ԳԲՔԱ-ՆԳ-2020/09 բողոքի շրջանակներում «Սապսան գրուպ» ՍՊԸ-ի կողմից 24.01.2020թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**